**Արձանագրություն N 2-2**
**ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/36 ծածկագրով <<Նախադպրոցական հաստատությունների շենքեր. Նախագծման նորմեր>> ՀՀ շինարարական նորմերի մշակման, տեղայնացման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

| | |
|---|---|
| ք. Երևան | 22.10.2021թ.<br>ժամը 10:00 |

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ռ. Ադամյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Չավուշյան |
| | Գ. Ծատուրյան |
| | Մ. Հարությունյան |
| | Վ. Առաքելյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Նիկոլայան |

## 1. Գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին

(Ռ. Ադամյան)

1.1 Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 20.10.2021թ. ծանուցվել է <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ին՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է վերջինիս կողմից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0:*

## 2. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Ռ. Ադամյան)

2.1 Հիմք ընդունելով մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հայտ գնահատվել է հետևյալ կերպ.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|---|
| 1 | <<Երևաննախագիծ>> ՓԲԸ | բավարար |

2.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:*

## 3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ռ. Ադամյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունած որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

## 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Ռ. Ադամյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Ռ. Ադամյան

Անդամներ՝ ---------- Ա. Չավուշյան

---------- Գ. Ծատուրյան

---------- Մ. Հարությունյան

---------- Վ. Առաքելյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Նիկոլայան